600.0699.08.12.10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

8 դեկտեմբերի 2010 թվականի №699Ն
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի №358Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում՝ «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում» (այսուհետ՝ Կանոններ), կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.
   1) Կանոնների 3-րդ կետի «տեխնիկական պայմաններ՝» հասկացությունը «սպառման համակարգը» բառերից հետո լրացնել «նվազագույն ծախսումներով» բառերով.
   2) Կանոնների 13.2 կետում «Դիմող անձի սպառման համակարգը էլեկտրական ցանցին նվազագույն ծախսումներով միացման տեխնիկական պայմանները (այսուհետ՝ տեխնիկական պայմաններ)» բառերը փոխարինել «տեխնիկական պայմանները» բառերով.

3) Կանոնների 77-րդ կետի ե) ենթակետում «50-րդ կետում» բառերը փոխարինել «52-րդ կետում» բառերով.

4) Կանոնների 77-րդ կետի զ) ենթակետում «52-րդ և 54-րդ կետերում» բառերը փոխարինել «53-րդ և 54-րդ կետերում» բառերով.

5) Կանոնների 83-րդ կետում «6(10) կՎ և բարձր լարման ցանցին միանալու դեպքում, բացառությամբ Երևան քաղաքի,» բառերը փոխարինել «էլեկտրական ցանցին միացման դեպքերում» բառերով.

6) Կանոնների 84-րդ կետում «2011» թվերը փոխարինել «2013» թվերով.

7) Կանոնների №2 հավելվածի 2.1 կետի 2-րդ ենթակետը «ավարտել» բառից հետո լրացնել «և կնքել էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
8 դեկտեմբերի 2010թ.